ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
N 19.03.2018թ. ԿՆՔՎԱԾ ԴԾԻԳ-ԲՄԾՁԲ-18/1
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Ք. Երևան **<< 16 >> ապրիլի 2018թ.**

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության <Դատաիրավական ԾԻԳ> պետական հիմնարկն, ի դեմս տնօրենի պաշտոնակատար **Տաթևիկ Դավթյանի**, այսուհետ՝ < Պատվիրատու >, մի կողմից, և **<ՄԵՅՍԻՍ ԻՆՖՈՐՄԵՅՇՆ ՍԻՍԹԵՄՍ> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Արմեն Մանուկյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ < Կատարող > մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ՝ **Կողմեր**), ղեկավարվելով պետական կարիքների համար գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և հիմք ընդունելով Կողմերի միջև **19.03.2018թ**. կնքված թիվ **ԴԾԻԳ- ԲՄԾՁԲ-18/1** գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.2, 7.5 և 7.15 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1.ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Հիմք ընդունելով Կատարողի կողմից՝ որպես Պայմանագրի կատարման ապահովում, **13.04.2018թ**. ներկայացրած **8100000** (ութ միլիոն մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ արժեքով թիվ <**O.AB.100.11CB.ESC.2.1878.18**> բանկային երաշխիքը (երաշխիքը թողարկող՝ <Ամերիաբանկ> ՓԲԸ)՝ փոխադարձ համաձայնությամբ Կողմերը որոշեցին.

1.1 Պայմանագրի N1 հավելվածով սահմանված Տեխնիկական առաջադրանքի 4-րդ մասով սահմանված ծառայությունների մատուցման ժամանակացույցում որպես Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման T_0 սկիզբ սահմանել սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:

1.2 Պայմանագրի N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ծառայությունների մատուցման դիմաց վճարումներն իրականացնել համաձայն սույն համաձայնագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցի:

1.3 Պայմանագրի շրջանակներում մատուցվող ծառայությունների ձեռքբերման համար 2018 թվականի Պայմանագրի ընդհանուր գինը սահմանել **81000000 (ութսունմեկ միլիոն)** ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: